72-ՐԴ ՆԻՍՏ

25 փետրվարի 1919թ.

Նախագահական աթոռումն է *Գ. Տեր-Խաչատրյան:* Մինիստրական օթյակում են ներքին գործերի և խնամատարության մինիստրները:

Ամբողջ կես ժամ աջն ու ձախը սպասում են կենտրոնին, որի սեղանները պարապ են: Ապա նախագահը քվորում չլինելու պատճառով նիստը հայտարարում է չկայացած և փակված ժամի 8 անց կեսին:

«Ժողովուրդ», 2 մարտի 1919թ.

73-ՐԴ ՆԻՍՏ

28 փետրվարի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Տեր-Խաչատրյանի.* մինիստրական օթյակում են ներքին գործոց, խնամատարության և լուսավորության մինիստրները:

Նիստը բաց հայտարարելուն պես հասարակության միջից լսվում են բացականչություններ. «Չե~նք ուզում այսպիսի խորհրդարան», «Մենք պահանջու~մ ենք ընտրովի խորհրդարան», «Դու~րս ինքնակոչ պատգամավորները» և այլն:

Նախագահ - Առաջարկում եմ հասարակությանը հանգիստ մնալ և չխանգարել նիստը, հակառակ դեպքում ստիպված կլինեմ հեռացնել դահլիճից:

Քվորում չլինելու պատճառով նիստը հայտարարվում է փակված երեկոյան ժ. 8 և 5 րոպեին:

Բժ. Գրո - Մենք առաջարկում ենք մասնավոր խորհրդակցության բնույթ տալ հավաքույթին և հասարակության համար պարզել այն պատճառները, որ խանգարում են խորհրդարանի նիստերը կայանալուն:

Նախագահ - Ես չեմ կարող կազմել այդպիսի խորհրդակցություն:

Նախագահը իջնում է ամբիոնից և թողնում դահլիճը, որտեղ մնում են էսէռական, էսդեկական և Հայ ժող[ովրդական] կուսակցության ֆրակցիաները:

Հուզված հասարակությունը շարունակում է աղմկել և պահանջում է, որ թողնեն դահլիճը նստած պատգամավորները:

Բարձրանում և նախագահական աթոռին նստում է խորհրդարանի փոխնախագահ Զուբյանը և փորձում է խոսել, սակայն հասարակությունը աղմկում և պահանջում է իջնել նախագահական աթոռից և դուրս գնալ:

Զուբյանը չի զիջում և նորից փորձ է անում խոսել:

Հուզված հասարակության մի մասը անցնելով դահլիճի պատվառը, մոտենում է Զուբյանին և նրա թևից բռնած ցած բերում ամբիոնից:

Առանց միջադեպի, աղմուկից հետո կրքերը հանգստացած հասարակությունը ցրվում է:

«Զանգ», 12 մարտի 1919թ.